




ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻՒ 147

16 ՄԱՅԻՍ 1914

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆԻ

ԵՍԵՆ
ԵՐԱՐՈՒՄԻ
ՏՈՒՐՈՒՄ

ՏՕՂԱՑՈՅՑ

Մայիս 17	† Կիր. քկ.	Զ. եւ ԼԶ or Յինանց :
18	Բշ. գձ.	ԼԵ. or Յինանց :
19	Գշ. գկ.	ԼԸ. or Յինանց :
20	Դշ. դձ.	ԼԹ. or Յինանց :
21	† Եշ. դկ.	Տօն Համբարձեան :
22	Ուր. աձ.	ԽԱ. or Յինանց : Պահոց
23	Շք. ակ.	ԽԲ. or Յինանց :



ԿԱԹՈՂԻԿԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԴՐԱԿԱՆ
ՇԱՐԱՐԱԹԱԹԵՐԹ

Զորրորդ տարի 16 Մայիս 1913 Թիւ 147

«Մերական Քահանայապետն Պիոս Ժ. կը մաղթէ որ Կաթողիկէ Արձագանգ շաբաթները բա-
րունակէ Հայաստանի կաթողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կա-
տարել, ի բարգաւաճման կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մաղթանաց արդիւնաւորութեան համար
Մերական Հայրն սրտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթները, ինչպէս նաեւ անոր խմբագիրներն եւ ընթերցողները»:
Նամակ Կաթղ. Մերի ձէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պիարոս Ժ.Ի. Թեղեքան, Հայ Կաթողիկէ Պատրիարք Կիլիկիո
23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քուսմամբաւ:

ԴԵՊՅԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ՊԱՅԳԱՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Ա.

«Un sot trouve toujours un plus sot
qui l'admire».

BOILEAU

Մարդիկ կան որոնք պատասխանի ար-
ժանի չեն իրօք, վասն զի իրենց լսածին ի-
րենք ալ չեն հաւատար, եւ յետոյ իրենց հա-
մար ձշմարտութիւնը արժէք ու կարեւորու-
թիւն ունեցող բան մը չէ. էականը այն է
որ խօսին կամ գրեն եւ շարունակեն զրամ
շահիլ ունէ կերպով:

Հետեւապէս իրենց համար չէ որ պիտի
պարզենք մեր տեսութիւնները եւ պիտի

պաշտպանենք նախատեալ ձշմարտութեան
դէմքը երկնածպիտ, այլ անոնց համար որոնք
ժամանակ եւ զիւրութիւն չունին պատմու-
թիւն եւ վաւերաթուղթեր հետազօտելու,
եւ համոզուելու անձնական ուսումնասիրու-
թեամբ թէ՛ ստելու անգութ արհեստը ինչ
զգալի յառաջդիմութիւն ըրած է մեր դժ-
բախտ ազգին մէջ:

Պապ եւ Աւետարանի ապացուցեալ հեր-
քումը հրատարակուեցաւ արդէն Արձագանգի
մէջ ի գոհութիւն թրիստոմասէր հոգեւոր. ա-
մէն ողջամիտ գրողէ կը սպասուէր հաճու-
թեան եւ համակրութեան արտայայտութիւն
կամ դէթ յարգալի լուծութիւն մը: Բայց գլու-
հուած են անձինք որոնք ուխտագրութիւն
նականի մը կեղծարարութեան մեղսակից ըլ-
լալ պատիւ համարելով եւ հայ ազգին ողջ-
մրտութիւնը նախատելով անխիղճ, սուտ
կաթողիկէի դիմակին ներքեւ՝ հրապարակ

կ'ելլեն տակաւին եւ Ս. Գիրք ու Աւետարան բառերու սրբապիղծ գործածութեամբ կը պնդեն թէ Սղորոսմայէրի նման բարձր իմացականութիւն մը այդպիսի յիմարութիւններ լսելի ըրած է ի լուր աշխարհի: Բանքեր կըրնայ գրուածներու ամենէն պոգալին ներքողել իբրեւ «ողջմտութեան մարմնացումը»:

այսպիսի գնահատում մը բան մը չի յաւելուր բնաւ գրքոյկին, բայց շատ բան կը պակսեցնէ Բանքերի պատիւէն եւ արժանիքէն: Դժբախտութիւն մըն է իրեն համար որ չէ յիշած Պուալօի յանդիմանութիւնը: անշուշտ քիչ մը չափ պիտի դնէր իր անեզր հիացման:

Եւ ինչո՞ւ այդ ծագրելի գովեստը, որ նողկանք կը պատճառէ չեմ ըսեր ամէն Կաթողիկէի, այլ նոյն իսկ ամէն պարկեշտ Հայու: «Վասն զի անոր բուն հեղինակը մէկ ձեռքը Ս. Գիրքը եւ միւս ձեռքը պատմութիւնը առնելով կը խօսի, եւ թէ այն ատենաբանութիւնը բառ առ բառ արտասանուած է վատիկանեան Ժողովին մէջ, ասի կը դրենք ականջալուր վկայէ մը լսելով»:¹

Ոեւէ սկզբունք եւ վարդապետութիւն հաստատելու համար ըստ ուղղափառ աստուածաբանութեան, չի բաւեր յառաջ բերել միայն Ս. Գրոց խօսքերն ու վկայութիւնները: ամէն դարու ազանդաւորք Արիոսէ մինչեւ Լուտեր եւ Ժան Զիւսէ մինչեւ Լուազի՝ միշտ Ս. Գիրք ի ձեռքն եկած են քանդել Սիոնի որմերը: Առաջին ու անհրաժեշտ պայման է չչեղիլ այն իմաստէն զոր ուզած է տալ այդ խօսքերուն Հոգին Սուրբ: Ինչպէս հնար է գտնել անվրէպ Հոգւոյն Սրբոյ իմաստը. — դիմելով աւանդութեան:

Արդ ամէն վկայութիւն Ս. Գրոց որ չի հիմնուիր Աւանդութեան վրայ, կրնայ կասկածելի ըլլալ եւ անընդունելի մեզ համար, եւ ամէն վկայութիւն որ կը հակառակի Աւանդութեան, բացարձակօրէն սխալ է եւ խորշի յաչս ուղղափառութեան:

Սմբագիրներէ ոմանք որ այնչափ հետուսութիւն ունին աստուածաբանական սկզբանց, որչափ ես Լուսնի ձորերուն եւ բնակչաց,

կրնան չլանալ Աստուածաշնչի անվերջ վկայութիւնները տեսնելով քրիստոսամարտ գրութեան մը մէջ. կը կարեկցինք իրենց, եւ եթէ չափէն աւելի յանդուգն չըլլան իրենց հաստատութեան մէջ, կրնանք նոյն իսկ չմեղադրել զիրենք:

Գալով պատմութեան, ամէն հմուտ անձ գիտէ թէ ո'ւեւ իրողութիւն հաստատելու համար չի բաւեր անուններ ու թուականներ շարել իրարու ետեւէ. չի բաւեր ո'ւեւ պատմական դէպք յիշել եւ անմիջապէս յաղթուսթիւն երգելու սկսիլ, եթէ յիշուած դէպքը վիճաբանութեան նիւթ եղող ինչորէն ցոյց է բոլորովին եւ կամ այդ ինչորոշ թեր ու դէմ ոչինչ կ'ապացուցանէ: Պէտք է որ յիշուած անուններ, դէպքեր ուղղակի կամ դէթ անուղղակի ստուգութիւն ունենան ապացուցանելի ինչորոշ հետ: Եւ միշտ երկու կէտեր պէաք է անհրաժեշտաբար ի նկատ առնուին, օրինակի համար, երբ ընդդիմախօս մը յաւակնութիւն ունի հերքելու յանուն պատմութեան՝ Անսխալութեան վարդապետութիւնը, պէտք է՝ ա. Գիտնայ թէ մինչեւ ո'ւր կը հասնի Անսխալութեան առանձնաւորութիւնը, եւ Բ. Գտնէ Պապի որոնք գործի լինին այս առանձնաշնորհումէն: Ահա երկու հիմնական սկզբունքներ, որոնց դէմ ծայրէ ի ծայր կը մեղանչէ խարդախեալ «Ատենաբանութեան» հեղինակն որ կը յաւակնի պատմականօրէն հերքել Անսխալութեան վարդապետութիւնը: Ծիւ գ ու ուրի, վաստակ ընդունայն, զի անհնար է ձգտարտութեան դէմ փաստ գտնել, եւ միւրոքութեան տգեղ դէմքը գեղեցկացնել պատմութեան անգոյրով:

Քանի՞ անգամ ըսած ու գրած ենք թէ Անսխալութիւն չնշանակեր անմեղանշականութիւն, թէ անսխալութիւնը չտարածուիր արտաքին (profane) եւ երկրորդական խնդիրներու վրայ, թէ Պապերն այն ատեն անսխալ են երբ կը խօսին յաթոռոյ (ex-cathedra) եւ վճիռ կ'արձակեն կրօնի, բարոյականի եւ եկեղեցական բնականուր բարեկարգութեան էական եւ անյեղի սկզբունքներուն վրայ:

Ուստի ոչինչ կ'ապացուցանէք մեզ դէմ:

¹ Բանքեր 40 Աղբիւ 4944

երբ տղայամիտ ուրախութեամբ կ'ենէք եւ կը գոչէք ձեր բոլոր ոյժով . «Ահա մէկէ աւելի Պապեր որոնք սխալած են» Մենք Աստուածաբանութեան եւ պատմութեան ջանքի ձեռքին կը մօտենանք յարգանքով այդ Ս . Քահանայապետից , եւ կը տեսնենք ու ցոյց կուտանք աշխարհի թէ նոքա՝ սոյն ցոյց տրուած աննշան դէպքերու մէջ , յաթոռոյ չեն խօսած , հաւատոյ մաս մը չեն սահմանած , եւ հետեւապէս Անսխալութեան աստուածային առանձնաշնորհումն մնացած է քսան դարէ ի վեր միշտ անվար ու անպարսաւ :

Գալով խարդախեալ «Ատենաբանութեան» , մենք խօսեցանք փաստերով եւ ապացոյցներով , դուք կ'ուրանաք ձրիաբար . թող դատէ ուշիմ ընթերցողը թէ ո՛ր կողմն է անկեղծութիւն , լրջութիւն եւ ճշմարտաւէր ոգի : Դուք կրնաք հաւատալ Ձեր «Ականջալուր վկային» . այս ձեր պատիժն է արդէն , անհաւատներու ճակատագիրն լինելով դիւրահաւան լինել . բայց մենք եւ հայ մտաւորականութիւնն ամբողջ՝ պարտաւոր չենք ձեզ չափ դիւրահաւան լինելու . . . :

Բաց աստի եթէ Տիեզերական Ժողովոյ Հայրերէն , աշխարհածանօթ հեղինակներէ , քաջահմուտ պատմագիրներէ , փայլուն հանձարներէն աւելի արժէք ունի առ մեզ «աւանջալուր վկայ մը» , մենք ալ այդ լրբենի «ատենաբանութեան» բոլորովին չինձու եւ ստայօդ ըլլալը կրնանք ապացուցանել «մէկէ աւելի ականջալուր վկայներով» որոնք ձեր «ծածուկ ականջալուրին» վրայ սա փոքրիկ առաւելութիւններն ալ ունին որ մասնիչ եւ ուրացող չեն եղած , Աւետարանի վրայ իրենց ըրած երդումներուն չեն ստած , սրբատաշ խորամներու առջեւ իրենց հանդիսաւոր երկակ ուխտերը չեն պղծած , քրիստոնէի միւսունը եւ հոգեւորականի չղարշը ցելսէ ցելս չեն նետած , իրենց յանձնուած աւանդին դէմ աղուէսօրէն չեն նենգած , մարդկային եւ աստուածային օրէնքները ոտնակոխ չեն ըրած , տգէտներու նախապաշարունակները չեն գլուխ տուած , ձրի ժողովրդականութիւն չահելու մարմաջով հրապարակ չեն նետուած , իրենց

բարիք սիրող ձեռքերը չեն խայթած , արեւունչտ բռնակալի մը ոճիրներուն մեղսակից չեն եղած , եկեղեցականութեան վսեմ ասպարէզը դերասանութեան չեն փոխած , երկար տարիներ իրենց կրկին մօր — ըստ մարմնոյ եւ ըստ հոգւոյ — արցունք թափելուն պատճառ չեն եղած , Հոռմէ ընդունուած վկայականներն ու արարողները ընդդէմ Հոռմի չեն շահագործած , ամբողջ ազգի մը զայրոյթին եւ պիտանքին հակառակ՝ պայթակղալի հարստութիւններ չեն դիզած , Նեստորներու , Փոսերու եւ Լուազոններու փառքին չեն նախանձած , սկեպտիկ կղերականներ «Ի սեղան Տեառն Ամենակալի» չեն բարձրացուցած , հէգ եւ մոլորահետ ժողովրդի մը վրայ երկնից շանթերը չեն հրաւիրած . Աստուծոյ եւ Ս . Եկեղեցւոյ իրաւունքներն կրից ու ցանկութեանց կուռքին չեն զոհած . . . :

«Ականջալուր» ընդդէմ «ականջալուրի» , մենք տկարութիւն ունինք նախազաւեցու առաքինիները մոլիներու , ճշմարտաւէրներն ստուպաշտներու , անձնուրացներն եսասողներու , սրբասէրները սրբանենգներու , արծիւներն ագռաւներու , գառները գայլերու :

Բանբեր նախամեծար կը համարի ճիշդ տուր հակառակը ընել . իր գիտնալիք բանն է այս : Բայց թող Հայութիւնը հրահանգելու եւ Քրիստոսի եկեղեցին ի կարգ հրաւիրելու յաւակնութենէն հրաժարի այլ եւս . . . :

ՎԱՆԱԿԱՆ

26 Ապրիլ 1914

ՊԻՐ ՏԱՆԷ ԷՎԼԱՏ . . .

(Տեվամի)

Վիքթոր — Ժէրմէն պէօյլուտի :

Շայէտ պու գառար նազիք սուրէթտէ պէօյլուտիւմիւշ օլմասայտը վէ պիր աղաճըդ տա չալըշմըշ պուլունսայտը , պիւնեքսի գալի վէ սըհնէթի տէ պահա էյի օլաճագտը :

Էյէր տիկէր պիր գաչ պիրատէր վէ հէմ չիրէլէրի օլմուշ օլտտ տա , քէնտինի պիր աղինսանա եագըն պիր հալէ կէթիրմիշ պուլունսալարտը , սէճիյէսիտէ (caractère)

մաթընական մոլորակները պիր հալ իբրիսապ
իտեճէքտի :

Ֆագաթ չօճուգ հար հալընը... սարտը-
տը, սօտը, էօքսիւրիւքիւ, օսանկըն, միւ-
քէտտէր պիր հալէ տիւշտիւ... Հայաթ,
օնուէ կէօզիւնէ թէհամիւլիւ զայրը միւմ-
քին պիր պարը կիրան կիպի կէօրիւնիւրտիւ :

Կիթտիքճէ քէտէրի թէգաեիւտ իթտի,
տահա օն սօգուգ հաշարընտա իքէն արգա
արգայա քէտէր վէ վալիտէսիւի զայիւ
իթտի :

Սա մաֆիյ, հալընը քէնտի իւզէրինտէ
պու գատար քիւլիւթիւ սէրվէթէր իճթիմա
էյլէմիշ օլմաղէ, մէսուտ վէ պաթիթիյար
օլմասը իյճապ իտէրտի :

* *

Շիմտի պիր հապանճը Ֆուգի Լա թուշըն
էն մէշուր սօգաղընտան կէչէճէք օլուրսա,
հիշ չիւպիէ իսթէմէք քի :

— Պուրատա պիր իլլէթի սարիյէ հիւ-
քիւմ ֆէրմա օլմուշ մը — տէյէ քէնտի քէն-
տիսինէ սօրաճագ տըր :

Չիւնքի հէր թարաֆտա գանստլարը գա-
րանիւրը բէնճէրէլէր վէ իչինտէ քիմսէ սաքին
օլմայան էվլէրտէն պաշգա պիր շէյ կէօրմէ-
յէճէք տիր :

Հէր քիմէ սօրսա շու ճէվապը ալաճագ
տըր :

— Աքվ իտէրսինիզ, էֆէնտի, պուրատը
Միւսիւ Վիքթօր Ժէրմէնին միւլքի տիր...
շու տա օնըն տըր... :

— Եա ?

— Էվլէթ, Վիքթօր-Ժէրմէն զայլէթ գէն-
կին պիր էվլաք սահիպի տիր... Շուրտը
օնըն պէօյիւք պապասը թօրինին իգամէթ-
կեանը տըր... օ պիրինտէ տէ ճէտտի պու-
լընան Պրէնտրալլար օթուրուրլարտը...
իշթէ Արման Պէնինեինին էվի... Վօլթի-
Ժօնլարըն գօնաղը տա շու գարշըտաքի տիր
Վիքթօր-Ժէրմէնին պապասը, անասը վէ
թարար ֆամիլիասը տա շու կէօրտիւլիւնիզ
պօշ էվտէ իգամէթ իտէրլէրտի... :

— Պէնճէ Վիքթօր-Ժէրմէն պու էվլէրի
քիրայա վէրմէլի տիր :

— Բիմէ, էֆէնտի, Արթըգ պու կիւն
Ֆուգիտէ օ էվլէրի թութաճագ պէօյիւք
ֆամիլիա գալմամըն տըր... էվլատ իսթէ-
մէմէք եիւզիւնտէն պի թիւն այլէլէր ոէյ-
րէգլէշմիշ տիրլէր... :

— Վարտըն էվլէնտին տէ, էվլատլարը
պու էվլէրի սօլտուրտընլար :

— Ալլան աղզընտան իշիթսին, էֆէնտի,
ֆագաթ հարսամազ... Պագընրզ շու կիւզէլ
օթէլէ, իշթէ օ Վիքթօր-Ժէրմէն թարտըն
տըր... պիւթիւն գանատլար գաբալը տըր-
լար... հալընը պիր սանէսի աշըգ տըր,
կէօրիւյօրմընրզ... օ սա, վէրէմտէն պիթ-
մէք իւզրէ պուլընան Վիքթօր Ժէրմէնին օ-
տասը տըր... Պէրէքթի վէրսին քի էպէ-
վէնի քէնտինտէն էվլէլ էօլմիւշլէր տէ օ-
նըն պէօյէ հալաշ հալաշ սէօնտիւլիւնիւ
կէօրմէյօրլար :

* *

Պու միւլէտիֆ մէնգարէյի սէյր էյլէմիշ
օլան հապանճը, Ֆուգի Լա թուշըն թէրք ի-
տէր վէ քէնտի քէնտինտէ տէ շէօյլէճէ սէօյ-
լէնիր :

— Չօգ սէֆա ձէնստըն Հապ գինտանըն
հիսապլարընր պօշա չրգարըր... Բէնտիսինէ
էմիլիէթ իթմէմիշ օլանլարըն սիւսիւսիւսի
մահվ էյլէր :

— Բեսաշքի Ֆուգինին պու ճանիւրաշ
հալի թէք պիր տանէ օլսա... Եագըգ
պէտպաթի Ֆրանսայա, պու կիւն էվլատ
իսթէմէմէք եիւզիւնտէն նէ սէֆիլ տէրէքէ-
լէրէ թէնէղզիւլ իթմիշ տիր... Պիր վագըթ
հէր այլէտէ Ալլանըն վէրտիյի գատար էվ-
լատլար պուլընըր վէ պիր աղտճըն մէյլէլէրի
կիպի օնլարլա մէմնուէն օլուրտարը. հալպու-
քի պու կիւն մէզնէպին իվտիվաճ հագզըն-
տաքի ահքեամընա էնէմիլիէթ վէրիւմէսի
հասէպլիլէ, իշթէ պէօյէ իտանանլար խա-
րապ օլմապտա վէ օճապլար սէօնմէքտէ տիր :

Ն Ա Մ Ա Վ
ԱՌ ԱՂԵՔՍԱՆԴԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ
Է Զ Մ Ի Ա Մ Ն Ի
(Շաբ. եւ վերջ)

Աստուածածնա եկեղեցւոյ հետնուծողքն են
Նախ Ճամբը որդին Կարապետ էրէց .
Մկրտիչ էրէց և իւր եղբայրն Սիւրան . սա
աշխատական է ու ծուռ վզի որդի երեմիա
էրէցն , և իւր եղբայրն Խաչատուր էրէցն եւ
սոցա եղբայր տիրացու Յակոբ որ բազումս
մոլորեցոյց : — Սիմիոնի Զաքարիա էրէցն . . .
ուսման հերձուածողի և ոչ սատակեցաւ .
Ճիւղի թող Մարկոս էրէցն : — Դարձեալ եւ
այս ոք թէպէտ ոչ են հերձուածողք , այլ
միարան հերձուածողաց վասն կորստեան
վարդապետին և հակառակ Սուրբ Լուսա-
ւորչի յաթոռոյն և ոչ հնազանդ ժողովրդեանն
Աստուծոյ այսք են : — Եւ Աճեմ Վարդան է-
րէցն . և Քէչի Արուսթիւն էրէցն . — Եւ Թա-
ւուրի որդի Մահապի Սահակն և իւր եղ-
բորորդին Ոհաննէս . — Աստուծոյ Առաքելն . —
Եւ են այսոքիկ զսոք ախթարմայիցն զըլ-
խաւորք . — Նախ Թիւթէր որդիք Ղույումճի
Արուսթիւնն և Ովհաննէսն և Յակոբն Սու-
կիաս . — Շահամիր որդի Առաքելն , Ղալանկճ
Ղույումճի Մկրտիչն . Մըխլայիճի որդի Կա-
րապետն և Ովհաննէսն և իւր աղան ի Հոռոմ
յղեալ է . — Թէյճի Մկրտիչն . — Թէլլի Խա-
չատուրն : — Չալլի Արքանան . — Ղարա-
պիտ որդիք Պէկէրն և Տէլլէթն . — Ասկէր
որդիք Նիկողոս և Ովհաննէս . — Քէպէճի որ-
դիք , Պարնազ տիրացու Գրգորն . — Քաճէք
որդի Յակոբ և Վարախճի պատմաճի Սիմոն
և իւր աղան ի Հոռոմայ յղեաց . — Քիւլհան-
ճի որդի Մահապի Պետրոսն . — Ղուսուճոց
գլուխ Սատէան և իւր աղան Իփէքճի Ով-
հաննէսն , Ոսկերիչ Ովհաննէսն . և այս վե-
րագրեալքս իւրեանց կահամբ որդւովք եւ
գոտերովքն են հերձուածողք . — Էսկիճի
որդի Վէզիր խանն զէրդի Գրիգորն իւր
կնան եւ փեսան Արքանան . — Շալխամզդի
սա եղեւ պատճառ վարդապետին աքսոր-
մանն և Որմակար իշճի Վէզիրի տանն եւ

ձեռամբ սորա կաշառեցին և արարին որպէս
և կամեցան անիծեալքն . — Ղոյուճիոց Ի-
քիթ պաշի Արուսթիւնն հերձուածող :

Եւ այս են Սուրբ Գեորգա եկեղեցւոյն
հակառակ եւ Ֆռանկացեալքն

Քէօմիւրճի որդի Կոմիտաս էրէցն . — Կա-
րապետ էրէցն . — Լէվէնտ Յակոբ էրէցն . —
Մաթէոս էրէցն . — Զիհէնէմ Մէրտիւէնի
Նսայի էրէցն . — Դաւիթ էրէցն . — Ազա-
րիայի որդի Կարապետ էրէցն :

Եւ այս են գլխաւոր ախթարմայ
աւխարհակալքն

Սահատճի Գրիգորն . — Տղան Յակոբ . —
Լէվէնտի եղբայր Պէնկլի Արուսթիւնն . — Քոս-
տէպէկ Մինասն . — Ղասէֆէթ որդի Մինասն
և իւր աղան Էսային . — Էքմէքճի որդի
Գրիգորն . — Չօլախ Յարուսթիւնն և իւր եղ-
բայր Ապալանն . — Հաւկուր Մկրտիչն . — Քէմ-
խաճի Արգմանն . — Ոսկերիչ Սողոմոնն . — Ալ-
թունթով Ովհաննէսն . — Պուստացուն փե-
սան . — Պուսնազ Խաչատուրն և իւր որ-
դիք . — Ոսկերիչ Ովհաննէսն . — Էլպէկի որդին
Երեմիան . — Ախթեր որդի Գրիգորն . — Ղա-
զէզ Մելքոնն և իւր որդին Հուճրուզն ,
որ փաթերալեալ է Ֆռանկաց և սա եկն ըս-
տամազ և մեք յանդիմանեալ նմա և նա
անդրէն փախաւ ի Հոռոմ : — Եւ այսոքիկ են
հակառակ սուրբ յաթոռոց վասն հարամխոռ
թէլպիսք , որ այժմ եղեալ են կորագլուխք ,
թէպէտ սոքա ոչ են ախթարմայք , այլ
պատճառք աւերման և Սուրբ Երուսաղէմայ
պարտքն սոքա են արարեալ : Եւ վարդապե-
տին աքսորման եղեն սոքա և այլ չարաբա-
րոյս յարուցանեն միաբանելով ընդ ախթար-
մայիցն վասն օգտի իւրեանց զորձեն զայս
և են այսոքիկ . — Նախ ոսկերիչ Սրապիոնն . —
Ճիկէրճի Քրիստոստուրն սա Ֆուէկ . — Ժամ
տէլիսի ոսկերիչ Մկրտիչն . — Քեապէպճի ոս-
կերիչ Մկրտիչն . — Քէրէստէճի Գոսպարն . —
Ոսկերիչ Ղազարն . — Քէրէստէճի Յակոբն . —
Ոսկերիչ Նուրին . — Ոսկերիչ Մարտիրոսն . —
Պուստալու Թէլպիս Գրիգորն որ հայհոյիչ է
յօրինաց . — Խալէմէք Մաղաքիան . — Սա-
ռաճ Պաղտատարն :

Եւ այսք եմ կից արմատք

Որ սոքա են պատճառք եղեն վարդապետին աքսորմանն . որ սոքա իշխի գլուխ , մասնէին սու կանանց մեծամեծացն և միաբանեալ ընդ ախթարմայիցն տալով ձեռամբ սոցա կաշառք նոցա կանանցն և նոքա ընդ արանցն գողանալով զմիտան , և այսպիսի առիթ եղեն անիծեալք կինքս այս լողարարոյք մուրտառքն և են այս . Իշխի Մարթա կինն . — Ղազէզ Իբրահիմի կինն . — Մուրացկանի ապաշխարող աղջիկն . — Էքսէրճ Եղիայի կինն և աղջիկն ապաշխարող . — Շահինի կինն և աղջիկն ապաշխարող . — Ալթունթոփի կինն և իւր ապաշխարող աղջիկն . — Տէփանի քէնին եւ Էզիզ կինն . — Ոսկերիչ Զաքարեան . — Աճէմ Արուսթիւն . — Ձէմէթիայի որդին Աստուրն . — Քէպէճի Սէրգիսն . — Պօլսալուի Գրիգորին աղջիկն . — Թումանճանի աղջիկն :

Եւ այսոքիկ եմ Սուրբ յաթողոյն Էջմիածնի եւ Ս. Դրիգոր Լուսաւորչիցն հակառակ եւ առիթ աքսորմանն վարդապետին

Նախ Մաթթէոս կաթողիկոսն Աբսա , սա բազում ժամանակ յալալ գոյն գործեաց զԷջմիածնի յԱթոռն հատանել , բովանդակ յերկիրն Հոռմատանն կապել ի Աբսա տանն և աստ Աւետիք վարդապետն ընդդէմ կացեալ նմա յաղթեաց որպէս եւ գրեալ ի վերոյ . Երկրորդ վարդապետն , որ ձեռնասուն աշակերտ էր Աւետիք վարդապետին սա միաբանեալ ընդ Մաթթէոս կաթողիկոսին եւ մասնեաց զվարդապետն իւր . — եւ Պալք-Քէսիրցի Հայրապետն . Եւ սոքա ոչ են հերժուած աղթարմայիցն , այլ միաբանեցան ընդ նոցին չարեացն , վասն կորստեանն վարդապետին , որ այժմ պատժեալ կործանեցաւ ի Թագաւորէն , որ բանտի ի քիւրէկն այսքան մարդով :

Եւ այսք են Պալթու Սուրբ Հրեշտակապետ եկեղեցւոյ . — Նախ Բեռնուոճի քեօն Ալիքսանն Եմուսիկ երէցն . — և Մարտիրոս մեծ երէցն , — և ջինկեանէն Ումանէն . — և այսոքիկ են դասք ախթարմայից զիսաւորք . Դազանճը որդի Սարգիս երէցն և իւր եղբայր տիրացու Արուսթիւնն կնաւն իւրով . —

և Զալքիս Ահարոն երէցն . — Դոնիք Կարապետ երէցն . Եւ միջն արեղայ Ղալաթացի , որ զպրատուն տղայք կարգացնէ , և մոլորեցոյց բազումս և կորագլուխ արարաք : Եւ խաչուրաց վարդապետն որ սա եղեւ պատճառ ամենայն մեղաց մոլորութեանց , — և սուտ վարդապետացն . — և հերձուտծող սահաթճի Սարգիս վարդապետն , — և Պէշիկթաշցի Յովսէփ վարդապետն . — Խաչատուր երկցու եղբայր Պօղոս վարդապետն . — Էպուշեխացի Սահակ վարդապետն , սա ոչ է Ֆոէնկ , այլ հակառակ Կեսարացի եաթլազ Սահակն , սա ի Կոստանդինուպոլիս ի սուրբ Աստուածածնա մէջ և այլ երկու վարդապետք եպիսկոպոս ձեռնադրեցաւ ի Մաթթէոս Կաթողիկոսէն և էր մինն Մարտիրոս վարդապետն որ մասնեաց զիւր վարդապետն , սա յետ աքսորմանն իւրոյ վարդապետին ձեռնադրեցաւ եպիսկոպոս և պատրիարք ի վերայ Ըստամպուլու : Կայծակի աշակերտ Սարգիս վարդապետն սա եկն թուրքի օրինօք բող մի էառ իւր կին , և յետ ժամանակաց թողեալ զկինն և այժմ վարդապետ է . Երեմիա վարդապետն սա միաբանեալ յերուսաղիմայ աւերիչի և հարամխուացն . Եւ Յեյիփցի Դրիգոր երէցն որ մականունն զեռ Մուստաֆա ասի , Ուսկուտարցի Սէլամուզի Աբրահամ երէցն . — Եւ Էրզուրումցի Մեսրոպ վարդապետ աղանդիւն Ֆոէնկ :

Եւ այս եմ Ղալաթիոյ Սուրբ Լուսաւորչի Եկեղեցւոյ հակառակք հերձուածողք զիսաւորացն :

Նախ Յակոբ երէցն և իւր որդովքն , սահառճի Դանէլն , և միւս եղբայրն . — և միւս եղբայրն . — Այրի Աբրահամ երէցն , Ներսէս երէց . — Ուսէմի երէցն , Տիրացու Անանեան , Եւ այսոքիկ են զիսաւորք ախթարմայք ուրացողք , նախ նորսունկն և իւր որդին որ ուղարկեալ ի Ֆռանկստան , և իւր կինն և փեսան որ բազումս ուրացոյց , Հալաճի փեսայ տիրացու Դէորզն , որ իւր կինն սատակեցաւ և Ֆոէնկ փաթերայքն թաղեցին : Բըշըլ որդի Յակոբն . — Քէրէստէճի Շահինն և իւր կինն , և սոքա զայրն թէրահանէն բանտի

է, և կինն ի զընտանն է, ընդ ախթարմայից Մանճուզունլու պալի զալիֆան: Յակոր որդի Գէորքն և եղբայրն Արուսթիւնն.— Ազնաւորի փեսա Սարգիսն և իւր կնանն.— Պոչախչի Գառպարն և կինն և որդիքն: Ոսկերիչ Մըլքսէթն.— Սահատճի Թաթոսն.— Սինան որդի Յարութիւն: Տէր Անտոնի փեսա Ներսէս եւէյն և իւր որդին և երկու աղջիկն, որ Փռանկաց ապաշխարող եղեալ է.— Ջուխացի Արութիւնն և իւր կինն.— Չոլախի որդի, իւր կնանն: Սարգսի փեսայ թիւլպէնաճի Յարութիւնն.— Պողոսճի Ազարեսն.— Էսկիճի որդի Մուրաան.— Երէց որդի Անտոն, և եղբայրն Ունանն.— Ղապամաճի Իորայէլն.— Ղապամաճի Պետրոսն և իւր որդին Գրիգորն.— Ղապամաճի Ղուկասի որդի Յարութիւնն.— Մըշեխի որդին Պետրոսն որ ֆոէնկի փաթերայ է.— Մոլցի Մարախրոսն, և երկու որդիքով որ ֆոէնկիոտան կարգաւ յղեալ է.— Սահատճի Թէրճիման Յակոբն.— Ջէմպէրէքճի Պողոսն.— Ջէմպէրէքճի իւր Նուրին և իւր տղան.— Ոսկերիչ Ղափանն.— Ոսկերիչ Մեղքոն.— Ղալէմքեար Վարդերեսի որդի Ղամբուռ Գրիգորն որ իւր տունն ֆոէնկի ժամուն վաղմ արարիւր է, Հաճի Ուսէփն.— Հաճի քոր Պետրոսն.— Պօչին տղան Ֆիտանն,— Էրզրումի քոս Ղալէթն:— Սահատճի Էլման.— Սլան օղլու Առաքելն.— Սահատճի Աւետիքն:

Ի քվականութեան մերում գրեցաւ ի մայրաքաղաքն Կոստանդինուպոլիս ՌՃԾԵ. Գեկեմբերի քամ:

Նուսատ ծառայ Հօրդ իմոյ, և վէթիլ վէհին իմոյ Աւետիք Աստուածաբան վաղդապետի և պատրիարք յերուսողէմայ եւ Կոստանդինուպոլսոյ յաթոռոց սպասաւոր Միքայէլ երէց, Խարբէրցի, գիտութիւն լիցի վէհոյ իմ, զայս ամենայն վարդապետք, մինչ որ քո յաթոռոց չըգան, եւ տեսանես զբուռութիւնս նոցա եւ զվարս, եւ ապուռեցին զիր հրամանուցդ, չըջարիւր կրել եւ քարոզել եւ միք տեսցուք եւ ընկալցուք զայնք: Եւ թէ ոչ ունիցին ոչ ընդունիմք զնոսա, վասն այսմ պատճառի աշխարհս ապականեցին:

Յովհաննէս վրդ. քարոզող համայնից.
Խաչատուր վրդ. առակեթ Եփրեմիս.
Ահար

Եւ այս աւերեալ կնիքս խաբնօք կոխեր են եւ սա բողաբար եւ արբեցող, ընդ զողորմն եւ բազն չըջի եւ ոչ Լուսաւորչի ժողովրդեան որ ոչ Եկեղեցի մտանէ: Եւ այս գիշեր ցերեք տնէ տուն ընդ հակառակորդաց միաբան եւ պատճառ վրդովմանց:

Լուսաւորչի ժողովուրդք
Խուչա Մարգար Պարթեւազն.
Սուրբ Գեորգ Եկեղեցւոյ ժողովուրդն են.
Մաթեոս Ջուղայեցի Թօպչեց.
Խօնա Դաւիթ Կարապետ
Մահդեսի Աբրահամ
Չախմախի որդի Սահակ որ ախտրանգների հերիչ.

Սուրբ Գեորգ Եկեղեցւոյ միաբան քահանայից:

Սուրբ Գեորգա են ասոնք ալ,
Սուրբ Ասուածածնա միաբան քահանայից եւ ժողովրդոց.
Տաւուզ խալժան Երեմիա.

Գրիգոր.
Գրիգոր Խալժան.
Լուսաւորչի ժողովուրդ:

(Բոլոր կնիքները միասին 448 են, որոնց մի քանիսի տակէն վերոգրեալ ստորագրութիւնները կան):

Վ. Ե. Զ.

ՁՈՒՂԱ (ՃՈՒՐԵԱ) ԳԻՒՂԱՔԱՂԱՔԻՆ ՎՐԱՅ
ՅԵՂԵԿՈՒԹՈՒՆՔ

Այս գիւղաքաղաքը Սպահանէն 6 հազար ամէր հեռաւորութիւն եւ 3000 բնակիչ ունի ամէնքը քրիստոնեայ, որոնց 200ը Հայ Կաթողիկէ, մէկ քանի ընտանիք Բողոքական եւ մնացեալ ամէնքն ալ Էջմիածնական:

Մինչեւ 1903 մի միայն Էջմիածնականք եւ Բողոքականք հոն դպրոցներ ունէին, իսկ 1903ին Մայիս ամսոյ մէջ եկան հաստատուեցան հոն Հազարիսթ զաղղիացի քահանաներ եւ մայրապետներ եւ յաջողեցան այլ եւ այլ հաստատութիւններ բանալ եւ այժմ ունին տնդ:

1) Մէկ վարժարան մանչերու ուր կ'աւանդուին հայերէն, գաղղիերէն, անգղիերէն եւ պարսկերէն լեզուները, ինչպէս նաեւ թուաբանութիւն եւ արդի գիտութիւնները:

2) Մէկ վարժարան աղջկանց եւ արուեստանոց, որոնք կը կառավարուին գաղղիացի մայրապետաց (sœurs de charité) ձեռք եւ օգնութեամբ Հայ Կաթողիկէ վարժուհեաց. այս դպրոցին մէջ կ'աւանդուին նոյն լեզուները եւ գիտութիւնները եւ ձեռագործներ կը սորվեցուին աղջկանց:

3) Մէկ գիշերօթիկ վարժարան աղջկանց, նոյն մայրապետաց ձեռք բացուած:

4) Մէկ ապաստանարան, լքեալ եւ անտէր որբ մանչերու եւ աղջիկներու համար: Այս դպրոցներու աշակերտաց (մանչ եւ աղջիկ) թիւը կը հասնի 300ի:

Վերոյիշեալ քահանաներէն մէկը իր անձնական դրամովը տպագրական մեքենայ մը բերել տուած է եւ հոն հայերէն, պարսկերէն եւ գաղղիերէն այլ եւ այլ օգտակար եւ դիւրամատչելի գրքոյկներ տպել սկսած է:

Վերոյիշեալ քահանայից մեծաւորն է Բէր Տըմութ (Demuth) որ շատ լաւ հայերէն գիտէ եւ կը դասախօսէ եւս այս լեզուն, եւ կը քարոզէ հայերէն լեզուաւ. իրեն օգնական առած է Տէր Մարկոս Տէր Թովմասեան քահանան որ ծննդեամբ սպահանցի է:

Եկեղեցական արարողութիւնները մեծ եռանդեամբ կը կատարուին. ամէն կիրակի եւ տօնի օրերը հանդիսաւոր ձայնաւոր պատարագ կ'ըլլայ եւ աւետարանի ընթերցումէն ետքը Ս. Աւետարանի մեկնութիւն եւ կարճառօտ քարոզ մը կը սրուի հայերէն լեզուաւ: Ժողովուրդը ջերմեռանդութեամբ ներկայ կը գտնուի ամէն հանդիսութեանց եւ վարժապետները ու վարժուհիները ստէպ կը մերձենան Ս. Սեղանոյն:

Ժողովրդեան համար եւս քրիստոնէական վարդապետութեան առանձինն հրապարակական դասախօսութիւններ կ'ըլլան եւ շատ մարդիկ ներկայ կը գտնուին անոնց:

ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ ՍԿՁԲԱՆՑ ՎՐԱՅ

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ (*)

Է.

«Բարեմայն քլլաս, եւ պիտի քրլլաս սիրելի»:

Եթէ կ'ուզես դուն մարդիկներէն սիրուիլ. իրենց յարգ ու բարեկամութիւն ցոյց տո՛ւր. այն որուն ոչ ոք հաճելի է, սովորաբար ինքն ալ մէկու մը հաճելի չէ: Ընկերութեան մէջ ջանանք ամէնուն հետ լաւ վարուիլ, եթէ կ'ուզենք հոն հաճոյք զգալ. քանզի միշտ լաւ է մարդս այն տեղ, ուր ախորժելի կ'ընծայէ ինքզինք, եւ ի հարկէ կը ձանձրանայ հոն ուր հաճելի չէ: Կ'ուզե՞ս որ ամէնքը զքեզ սիրեն ու յարգեն, ամէնուն նկատմամբ կարի մեծ ուղղամտութիւն, քաղցրութիւն եւ բարեկրթութիւն գործածէ: Ատով է որ պիտի կարենաս բոլոր սրտերը շահիլ, եւ զանոնք քեզի գրաւել: Կ'ոտէ Սողոմոն. «Լաւ է բարեկամ մեծաւոր քան եղբայր (Առակ. ԺԸ. 24):

Ոմանց միայն հաճելի ըլլալ ուզելը իր շահերը լաւ չձանչնալ է: Այն որ ամէնէն սիրուած է, քիչ գործերու կը ձեռնարկէ, որ չյաջողին. իւրաքանչիւր ոք կը փութայ անոր օգնել. պիտի ամէնային մեծապէս վիշտ պատճառելու այնպիսի մէկու մը, որ ուրիշ բան չի փնտռեր եթէ ոչ ուրիշներուն հաճոյք պատճառել եւ անոնցմէ սիրուիլ: Հրոշակաւոր Ֆինէլոն Եպիսկոպոսը անձամբ ասիկա փորձեց: Յաջողկոտ եւ նախանձոտ անձերէ ոմանք, քանզի ուրիշ տեսակ թշնամիներ չէր կրնար ունենալ, յատկապէս Բարիզէն հանճարեղ մարդ մը զրկած էին Գամպրէ որ, Արքեպիսկոպոսին այցելութիւն ընելու պատրուակին ներքեւ մօտէն անոր վարքը պիտի քննէր: Այս մարդը շատ ամիսներ Գամպրէ կեցաւ եւ հուսկ ուրեմն այնպէս մը զգածուեցաւ պատուական Արքեպիսկոպոսին արժանիքէն, իր հեզ կերպերէն, եւ իր չիւնի ընթացքէն, որ, օր մը, նոյնին հետ խօսելով, աչքերը արտասուօք լի իրեն խոս-

(*) ՑԻՊԻ ԹԻՒ 443, ԿԷ 248:

տովանեցաւ իւր ճամբորդութեան քամահրելի եւ ատելի գաղտնիքը, եւ Բարիզ դարձաւ սոսկումով լեցուն անոնց նկատմամբ, որոնք այդ պատուական Արքեպիսկոպոսը կը փափաքէին եւ կ'ուզէին արքունեաց կասկածելի ընծայել: Իւր ժողովրդէն սիրուած եւ յարգուած, ամէնէն հռչակաւոր օտարներն իսկ հաճոյքով անոր իրենց համարման եւ սիրոյ նոյնօրինակ հարկը կը հատուցանէին: Զմեզ սիրել տալու բարեբախտութիւնն մանաւանդ մեր խօսակցութիւններէն եւ տեսակցութիւններէն կախումն ունի: Եւ հոն է գլխաւորաբար որ, իմաստութիւնը կ'ուզէ, որպէս զի Զանաք զմեզ սիրելի ընծայելու: Բարեք ծառայութիւններն եւ ընծաներն յաճախ նուազ սիրտ կը շահին քան ուղիղ եւ բարեկիրթ խօսքերն:

Ուստի կը թուի թէ, դիւրին է ինքզինք սիրել տալն: Սակայն հազուադէպ է այն, վասն զի փոխանակ այն կերպով խօսելու, որ ուրիշներուն հաճելի պիտի ըլլար, մենք կ'ազնայ ըսել այն բանը, որ մեր քմաց ախորժելի է: Աւելի կ'ուզենք անհաճոյ ըլլալ, քան թէ ինչ ինչ անխորհուրդ խօսքերը զրսպել, եւ կամ բարութեամբ եւ բարեկիրթութեամբ խօսիլ: Հարկ պիտի ըլլար յաճախ նոյնպէս իւր անձնասիրութիւնը զոհել, իրեն հակումներուն դէմ մաքառիլ, իւր ճաշակներուն հակառակիլ, ուրիշներուն ճաշակին յարմարելու համար: Եւ այդ է զժուարիքը, երբ կանուխէն ատոր վարժուած չէ մէկը, եւ կամ կրօնական զգացումէ տողորուած չէ, որ կ'ուզէ, որպէս զի հեզ եւ հաճոյակատար ըլլանք այն ամէն բանի մէջ, որ բարի է ի շինութիւն, ինչպէս որ Առաքեալն կը յանձնարարէր նախկին հաւատացելոց: Մեր լաւ կերպերով առաքինութիւնը սիրելի ընծայելով, եւ սիրտերը ատոր շահելով, զանոնք մեզի ալ սիրաշահելու օգուտը ունինք, եւ այսպէս անոր բարի եւ երջանիկ պտուղները քաղելու բարեբախտութիւնն ալ կ'ունենանք:

Թարգմ. Ն. Ծ. Վ. ԱՃԷՄԵԱՆ

(Շարունակելի)

ԵՕԹՆԵԱՎ ՔՐԻՍՏՈՆԵԻ

ՀՈԳԵՆՈՐ ԼՄՏԱՌՈՒԹԻՒՆՆԵՐ

„ՆՄԱՆՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ“ ԳՐԲԷՆ

Գիւլ Ա.—Դլ. Ի.—Առանձնութեան ու լուսութեան սիրոյն վրայ:

(Շար.)

Լուսութեան ու հանդարտութեան մէջ կը գտնուանք յետմեռանդ հոգին ու կը ստիպի Ս. Դրոց գաղտնիները:

Հոն կը գտնուին արտաքին աղբիւրները, որոնցմով ամեն գիշեր կը շուայ ինքզինքն ու կը սրտէ, որպէս զի իր արտաքին աշխատի աւելի ընթացի ըլլայ, որպէս աւելի հեռու կը ընկնի ամեն աշխարհային աղմուկէ:

Ուստի ով որ կը հրաժարի իր ծանօթներէն ու քրեկամներէն, պիտի մօտեցայ անոր Աստուծո՛ւ սուրբ հրեշտակներով:

Աւելի աղիկ է ծածկուած մնալ ու իր անձին հոգ տանիլ, քան թէ իր վրայ անհոգ մնալով՝ հրաշքներ գործել:

Կրօնաւոր մարդու մը համար զովելի քան ի՛ր ցանցաւ դուռն ելլել, տեսնուել խորշիկ եւ շուգել մահւա մարդիկը տեսնել:

ՍՐԻՈՒՀԻ ԹԵՐԵԶԻԱ

(Պիոս Ժ. Կոնդակը)

Բնութեան ու շնորհի սուրբեր

Հարկ է ըսել թէ բնութիւնը ինքնին հիմնադրութիւն օժտած էր զայն սրբազան իրաց ուսուցման համար կարեւոր եղող ձեռքերով: Իր մաքին նրբութիւնը, իր հոգեւոր վեհութիւնը, իր սրտին բարութիւնը, ի անվերջ պատողութիւնը, իր կատարելով խորագիտութիւնը՝ նկատմամբ մարդոց և իրաց, իր հաճելի բնաւորութիւնը, իր ազնուական քաղաքավարութիւնը, իր ամէն բաները սիրտերը յանկուցանելու համար եղած էին: Իսկ շնորհաց իրեն տուած ձեռքերը այս բնական յատկութիւններէն շատ աւելի սքանչելի էին: Իր ապրած ժամանակամիջոցին՝ սրբութեան մէջ բազմաթիւ մրցողներ ունեցաւ, շեշտապատուած ըլլալով աստուածամերձ կեանքով և աստուածային գիտութիւններով նշանաւոր մարդիկներէ, որոնք նոյն ժամանակամիջոցը՝ Կաթողիկէ Սպանիոյ ոսկեգարը կոչել տուին: Թերեղիա սովորաբար յարաբերութեան մէջ գտնուելով այս սուրբ անձներէն շատերուն հետ, որ իրեն խորհրդական կամ բարեկամ կամ նոյն իսկ միաբանակից էին: Իր վրոյ միացուցած էր, այսպէս ըսած, անոնց բոլոր առաքինութիւնները և ձեռքերը:

Մենք միայն չունինք ի վեր հանել այս ժողովին մէջ Թերեղիայի կեանքին փայլուն կողմերը: Այս բանն մեզ շատ հեռունները պիտի տանէր: Մենք, սիրելի սրբեակք, պարզապէս կ'ուզենք ձեզի յիշեցնել:

անոր առաքինութիւններէն մէկ քանին՝ ձեր հոգ-
ւոյն մեծագոյն շահուն համար, և որպէս զի զանոնք
ուսուցանէք քրիստոնէայ ժողովուրդին. որովհետեւ
կը համարինք թէ հիմայ շատ օգտակար է անոնց յի-
շատակութիւնը:

Սրբուհիին հաւատքի

Հաճոյ է Մեզի աշխարհահոգով ընել նախ թէ
որքան կենդանի էր Թերեզիայի հաւատքը, քանի որ
մեր օրերը այնքան մարդիկ կան որ կ'անտեսեն և
մինչեւ անգամ յամառութեամբ կ'աւրանան հաւատքի
ճշմարտութիւնը, պատուակելով թէ բարձր է այն
մարդկային բանավարութեան սահմաններէն կամ թէ
գեր ի վերոյ է մեր բնական ծանօթութեանց անձուկ
ըջանակէն. որովհետեւ եթէ ճշմարիտ է որ հաւատ-
քը յուսացում իրաց հաստատութիւնն է, այսինքն իւ-
րեւ մեր մէջ գտնուող աստուածային կեանքին ար-
մատը և հիմ որուն վրայ բարձրանալու է քրիստո-
նէական կատարելութեան ամբողջ շէնքը, պէտք է
հիանալ նկատելով թէ ինչպէս այս կոյսը գիտցաւ հա-
ւատքով ապրիլ, միայն այս առաքինութեան առաջ-
նորդող ազդեցութեան տակ խորհելով, խօսելով և
գործելով: Եկեղեցին, պահպան և սեպհականատէր
ճշմարտութեան, անկէ աւելի հլու հպատակ, յար-
գադիր զաւակ չէ ունեցած. ոչ ոք անկէ աւելի ամ-
րապէս յարեցաւ ձեռնհաս գերագոյն իշխանութեան
ուսուցած վարդապետութեանց: Իսկ մը չլրացաւ
խախտել անոր հաւատքը, ոչ հերետիկոսաց նուրբ ի-
մաստակութիւնները, ոչ սատանային խաբէրատիր
մեքենայութիւնները: Եթէ կը գրէ նա, սոյնիսկ եր-
կնքէն եկած հրեշտակ մը կամ ձայն մը ուղղակի
ուսուցանէ ինծի հաւատալի ճշմարտութիւն մը, բնաւ
հաւատք պիտի չընծայեմ անոր, բաւական է որ այն
յայտնութիւնը եկեղեցւոյ աւանդական վարդապե-
տութենէն քիչ մը չըզած թուի ինծի:

Գրեմք նաև որ տրամադրուած էր, եթէ հարկ
ըլլար, հողարանգամ կեանքը զոհել հաւատքի պաշտ-
պանութեան համար: Իրեն համար քրիստոնէական
հաւատարմութեան պայծառ և ակներեւ ճշմարտու-
թիւն չկար, և անոնցմէ մի քանիին մարդկային մտաց
անթափանցելի հանգամանքը շարժառիթ մըն էր որ
Թերեզիա աւելի հաստատ կերպով յարէր անոնց:

Այս հաւատքը երեւան կու գար յատկապէս երբ
կը մերձենար Ս. Հաղորդութեան խորհուրդին: Այն
առնէ իր հոգին այնպէս կ'ամփոփուէր յԱստուած որ
կարծես լիովին կը վայելէր այս աստուածային խոր-
հուրդին տեսութիւնը և կ'ըջանկանար, և ինչպէս
հիշէ քարձեալ մեր նախորդը, Գրիգոր ԺԵ. «Անիկայ
հոգւոյ աչքով այնքան որոշակի կը տեսներ Նշխար-
քին մէջ դանուող քիտուս Գրիգորոս մեր Տէրը, որ կը
հաւատար թէ բնաւ չեմ նախանձիր երկնից մէջ Տե-
րը դէմ առ դէմ տեսնող երանելեաց երջանկութեան»
(կոնդակ սրբալուսման)

Այսքան արդիւնաւոր հաւատքով մը արժանի է.

զաւ ի մէջ պլլոց, նաև շնորհքին խորապէս մարդուս
իմացականութեան ներածին չափ նկատելու, Աս-
տուծոյ ամենէն անբաւանքի և ամենէն աննիւթա-
կան խորհուրդները. ունէր նաև վճիտ բացատրու-
թիւններով զանոնք պլլոց հասկցնելու ձիրքը. այս
ծանրակշիռ պատճառին համար է որ իր հոգեւոր ա-
ռաջնորդները չեն կասկածիր զինքը համեմատելու
Մովսէսի որ Աստուծոյ հետ խօսելու և զոյն
տեսելու անզուգական առանձնաշնորհութիւնը ու-
նեցաւ:

(Շարունակելի)

ՍԱՄՍՈՆԷՆ

4 Մայիս 1914

Սամոնի մէջ Ս. Շարթուրան և Զատկի
հանդիսութիւնները չքեղօրէն կատարուեցան
ի ներկայութեան Արհի. Վիճակաւորին, ու-
րուն ժողովուրդը օր քան զօր աւելի եռան-
դուն փարուժով յարած կը մնայ. Իբրեւ փա-
կում այդ հանդիսութեանց Հաղորդու-
թիւնը տեղի ունեցաւ ինը պզտիկներու: Այդ
առթիւ եռաձայն պատարագը ընկերակցու-
թեամբ ջութակներու եւ արմոնիումի, թա-
փօրը, աղջկանց դպրոցի մէջ սարքած երգե-
ցիկ եւ ճառերով հանդէսը, մկրտութեան
ուխտի նորոգումը, ողբերգութեան Արհի. եւ
պիսկոպոսնուս քարոզներով՝ արտասովոր
բազմութիւն հրաւիրեցին եւ փայլ տուին ի
միսթարութիւն ամենուն: Կրնայ օգտակար
ըլլալ պատ. թերթիդ ընթերցողներու՝ աղ-
ջկանց դպրոցի մէջ կարդացած ճառը, ուս-
տի հաճեցէք հրատարակել:

ԹՂԹԱԿԻՑ

ՍԱՄՍՈՆԻ ՎԵՐԱՓՈՒՄԱՆ ՔԵՐՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ ԱՇԱԿԵՐՏՈՒՂԵԱՅ ԿՈՂՄԱՆԷ

20Ն ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՂՈՒԴՈՒՆՈՂՆԵՐՈՒ

Արհիպպոսի Դերապայծառ Տէր,

Դերապպոսի Վարդապետ,

Պատուական հանդիսական

Պիտի ներէք որ ուշադրութիւննիս ձեզմէ
դարձնենք պահիկ մը. վասնզի հրաշալեաց
առջեւ կը գտնուինք, և ստիպուած ենք աչ-
քերնիս հոն յառելու:

Կը տեսնենք հոս անմեղ հոգիներ, որ առաջին անգամ ընդունած Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ Մարմինն և Արիւնն սերովբէից նման վառուած են գերբնական կայծով Աստուածային սիրոյ: Անոնց առջև զմեզ Քորեբ լիոր կը կարծենք, ուր այս անգամ մէկի տեղ ինը կենդանի մարմիններ վառուած են, և զանոնք վառողն է Այն, որ եկած էր հրդեհել երկիրն իր Աստուածային սիրովը: Անոնք լապտերներ եղած են, որոնց մէջ ցայթած է հրաշալիօրէն յաւիտենական ճշմարիտ Լոյսն, որով միայն մարդն կրնայ լուսաւորուիլ: Ողջո՞յն ձեզ, մարմնաւոր քերովբէներ, ողջո՞յն Աստուածավառ ջահեր. մնացէ՛ք այդպէս արժանաւոր աթոռ ըլլալու Աստուծոյ, անաղօտ լապտերներ Քրիստոսի ձեր երկնաւոր փեսային՝ մինչև իր գալուստն անուամբ Տեսնոն: Չենք ուզեր սակայն հիմնալ միայն, այլ կ'ուզենք օգտուիլ այս տեսիլքէն ի խրախոյս մեր հաւատքին, ի քաջալերութիւն մեր յուսոյն, յարծարծումն մեր սիրոյն առ Աստուած. կ'ուզենք օգտուիլ մանաւանդ ներկայ ժամանակուան մէջ. երբ պէտք կայ ա՛լ աւելի շնչտելու հաւատքնիս, զայն դաւանելու բացէն, հրապարակաւ, հանդիսապէս:

Եւ ո՞րքան չքեղ դաւանութիւն է հաւատքի և բացատրութիւն՝ Ս. Հաղորդութիւնը: Անով մենք զՅիսուս Քրիստոս մեր Աստուածն ունինք ամէն տեղ՝ մնալով մէկ. տիեզերատարած քրիստոնէութիւնն այսպէս կեդրոնացած կը գտնենք աստուածային անկիւնաքարին վրայ, մէկ արեւ ամէն կողմ կը ճառագայթէ և բիւրաւոր սրտերու բիւրեղներուն մէջ կը բեկբեկի նոյնն: Ո՛վ հրաշալի զօղ միութեան ամբողջ մարդկութեան, Յիսուս Քրիստոս, որ այսպէս ցկատարած աշխարհի իրեն պիտի քաշէ, պիտի միացնէ զամենքն մինչեւ որ իրմով տանի փառաց ծոցը: Ինքն ճշմարիտ որթն է, և մարդիկ տեսէ՛ք ինչպէս մի եւ նոյն հաւատքով, միեւնոյն խորհրդոյ մասնակցութեամբ կ'ազդեցուին անոր շուրջն և անով կ'ապրին ու կը պտղաբերեն: Անիկայ ճշմարիտ հացն է, որ սակայն ցորենի զանազան հատիկներով զանգուած ու չաղուած է, և ճշմարիտ հաւա-

տացեալներն կը զանգէ ու կը շաղէ միակ մարմնոյ մը մէջ, տիեզերքը լեցնող խորհրդաւոր մարմնոյ մէջ, որ եկեղեցի կ'ըսուի մի և ընդհանրական: Անիկա ողկոյզ մ'է յաւիտենական բլրոց, որ սակայն բազմապատիկ հատիկներէ հիւստած է և ահա կը ճըղմուի, կ'ըլլայ ախորժահամ գինի զմայլեցուցիչ, որով կը հոսի նոյն խորհրդաւոր մարմնոյն իւրաքանչիւր անդամներուն մէջ աստուածային Արիւնն անմահացուցիչ. Արիւնն որ խաչի ծառին վրայ կախուած երկնային ողկոյզէն քամուեցաւ դարահոս և կը հասնի մինչև մեզ ու պիտի հոսէ աշխարհիս վերջը:

Երնէ՛կ ձեզ, ընկերներ, հաստատուեցաք անսասան հիման վրայ՝ ի Քրիստոս որ միակ միջոցն է աշխարհային յոյգերուն մէջ ամուր պահելու զձեզ և անկործան. երնէ՛կ, որ պատուաւորուեցաք ճշմարիտ որթին, որով միայն կարելի է պտղաբերել համեղաճաշակ պտուղ արդիւնաւոր գործոց: Երնէ՛կ, որ կերաք երկնքէն իջած հացն կենդանի, գրաւական անմահութեան, անով Քրիստոս ձեր մէջն է և դուք ի Քրիստոս և այսպէս կը գտնուիք ամէն տեղ ուր նոյն հացը կը բաշխուի: Աշխարհասփիւռ քրիստոնէից հետ մէկ մարմին կազմած՝ տիեզերական եղբայրակցութեան մէջ շաղուեցաք իրականապէս Քրիստոսի մարմնով, որ կը բովանդակէ ամէն ինչ: Երնէ՛կ, որ խմելով Քրիստոսի ճըշմարիտ արիւնն, տեսաք թէ ո՞րքան քաղցր է Տէրը և այսպէս անոր սիրոյ անուշութեամբն զմայլեցաք, վառուեցաք սիրով և իբր խորհրդաւոր մոմիկներ հալեցաք Քրիստոսի, որ պատրոյզն է անսպառ, այն հրաշալի հալոցին մէջ, որով միայն հնար է ճըշմարիտ քրիստոնեայ ըլլալ:

Ուրեմն կը շնորհաւորենք զձեզ, վարժարանիս ամէն աշակերտուհիքս ու կը մաղթենք որ մնաք հաւատարիմ այս աւուր մեծ շնորհքին մինչև ձեր վերջին շունչը: Խոստացաք այդ հաւատարմութիւնն այս առաւօտ ընդունելով զՅիսուս: և այս երեկոյ պիտի նորոգէք խոստումնիդ հանդիսապէս վերիշնչելով Ս. Մկրտութեան առթիւ տուած դաւանութիւննիդ:

Արհիպատիւ Տէր, միջնորդն եղաք երկ-
նից ու այս անմեղ հոգիներուն միջև, և
տուիք անոնց օրուանս մեծ շնորհքը. օրհնե-
ցէ՛ք զիրենք որ մնան անով հաւատարիմ
Յիսուսի. և պիտի ըլլան երջանիկ:

Սաւստն 3 Մայիս Ն. Տ. 1914

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Հեռ-ԱՒՈՐ ԱՐԿԱՆՍԻՍԻ.—Անապատարնակ արաբա-
ցիք լեռնէ լեռ իրարու հետ կը խօսին. խաղաղ
հովտին վերեւէն, վճիտ օդին մէջէն, իրենց կոկոր-
դային ձայնը կը տանի կը բերէ փոխադարձ ող-
ջոյններն ու լուրերը. ասիկա անթեւ հեռագիր է՝
հնչական ալիքներով, նախնական դրութիւն այո՛,
բայց շահեկան. որովհետեւ հնչական ալիքները,
իբրեւ արագընթաց սուրհանդակներ, մէկ հազա-
րամէկը տեղ կ'ընթանան երեք մանրերկրորդի մէջ:
Բայց հիմայ լաւագոյնը ունինք:

Անթեւ հեռագրի ելեքտրական ալիքները մէկ
մանրերկրորդի մէջ կը կտրեն կ'անցնին 300000 հա-
զարամէկը տեղ, ճիշդ լոյսի արագընթացութեամբ
—արդէն ասոնք լոյս են՝ մեր աչքին անտեսանելի
— այնպէս որ էյֆէլի աշտարակէն ելած ազդա-
նշանը՝ մէկ տասնեւհինգերորդ մանրերկրորդի մէջ
կը կտրէ կ'անցնի երկրագունդի ամբողջ թանձրու-
թիւնը եւ կը հասնի խաղաղական Ովկիանոսի այն
կղզին որուն բնակիչներուն սոքերը ընդդիմադիր
են Բարիզցիներուն ոտքերուն:

Ուստի մէկ մանրերկրորդէն նուազ, շատ նուազ
ժամանակի մը մէջ անթեւ հեռագրի մէկ ազդա-
նշանը կրնայ հասնիլ սահմանուած կայարանը՝ եր-
կրագունդի որ կողմն ալ դառնուի այն:

Խօսինք ուրիշ ազդանշանի մը վրայ որ մեզի
հասնելէ առաջ ընթացիք է անջրպետին մէջ, մէկ
մանրերկրորդ, ասկէ աւելի, մէկ ժամ, մէկ օր, մէկ
ամիս... եւ նոյն իսկ երեք հարիւր տարի: Ուսկի՞ց
ելած էր այս ազդանշանը. կը հարցնէք բնակա-
նօրէն: Թեքեա կը կարծէք թէ չափազանցութիւն
կ'ընեմ: Ո՛չ երբէք: Մի՛տ դրէք:

1912ին, դարնան, աստղաբաշխական աշխարհին
մէջ շատ խօսուեցաւ այն պայծառ աստղին վրայ
որ յանկարծ փայլեցաւ երկնից մէջ եւ պարզ աչքով
տեսանելի եղաւ քանի մը շաբաթ Մարտ եւ Ապ-
րիլ ամիսներուն մէջ: Այս աստղը յորջորջուեցաւ
նոր աստղ Երկրագնակի թիւ 2, որովհետեւ ուրիշ նոր
աստղ մը նոյն աստղատան մէջ երեւցած էր մի քանի
տարի առաջ: 1912ի Մայիս ամսէն սկսեալ նոր թիւ
2ը արագ արագ աղօտացաւ եւ դիտարաններու խո-
շոր դիտակներով միայն տեսանելի եղաւ:

Այս հակերճ ծանօթութիւններէն կը հասկցուի

թէ նոր աստղերը արեւներ են որ առաջ անտեսա-
նելի եւ աղօտալոյս ըլլալով, յանկարծ ջինջ բայց
առժամանակեայ պայծառութիւն մը կ'առնուն.
Ի՞նչ է ասոր պատճառը: Գիտունները տակաւին կը
վիճին այս յանկարծական երեւումներուն պատ-
ճառներուն վրայ. կամ երկու ցուրտ եւ աղօտ
աստղեր իրարու կ'ընդհարին եւ կը լուսավառին.
եւ կամ լաւ եւս, հինաւուրց կեղեւապատ ա-
րեւի մը միջակէտը ամփոփուած խտացած հրեղէն
հոսանքները, զիրենք շրջապատող կեղեւը խորտա-
կելով դուրս կը պոռթկան յորձեռանդն՝ իբրեւ
հրաբխային վիթխարի ժայթքումներ, մարող արեւի
մը վերջին յանկարծացունց խլրտումներ: Մէօտոնի
դիտանոցին վարիչը որ օրը օրին կ'արձանագրէ ա-
րեւուն շագնաւուն ուլուրտին մէջ տեղի ունեցող ե-
րեւոյթները կը հաստատէ թէ մեր կեդրոնական
աստղին ցնցուածքներն, որոնք ի յայտ կուգան
բիծերով, լուսարատներով, այտոյցներով եւ սեւ գի-
ծերով, արդէն իսկ ցոյց կուտան, թէ եւ տկար աս-
տիճանի մէջ, մարող արեւներու բնորոշ երեւոյթ-
ներու ներկայութիւնը:

Բայց երկուորեակի նոր թիւ 2 աստղը մեր ու-
շադրութիւնը կը հրաւիրէ:

Ամբիկացի Սլոքում աստղաբաշխը ուղեց դտնել
այս աստղին տեղադրանքութիւնը (parallaxe), կամ
այսպէս ըսեմ ուղեց դտնել թէ այս աստղը ո՞րչափ
հեռու է մեզմէ: Աստղաբաշխական մանրադնին
քննութիւններէ յետոյ Սլոքում հաստատեց որ այս
նոր աստղը մեզմէ լոյսի 300 տարիի չափ հեռու կը
դառնուի եւ յանկարծական պայծառ փայլիւնը որ
երեւցաւ մեզի 1912ին արդիւնք է սոսկալի հրայր-
եացքի մը որ տեղի ունեցեր է նոյն աստղին մէջ
ասկէ իբր երեք հարիւր տարի առաջ:

Շատ կը պարծենանք անթեւ հեռագրին դիւտին
համար: Եթէ անթեւ հեռագրի հնարիչներն այս
նոր աստղին մէջ բնակէին եւ վերջին յուսահատա-
կան հեռագրով մը մեզի ծանուցանէին իրենց արե-
ւուն հանդիպած արկածը, հեռագիրը մեզի պիտի
հասնէր ճիշդ արկածին լուսանշանին պէս, 1912ին,
աղէտէն երեք հարիւր տարի վերջը:

ԳԱԹՕԼԻՔ ՄԵՉԶԷՊԻ ԷՍԱՍԼԱՐԸ(*)

(Տեղամի)

— Բուհը պէշէրին հիւրընդունի ինքեար
խոհիւէր քիմէր տիրլէր. պու պէօյիւք հա-
զիգաթը Ֆարալիսիք, բօզիքիվիսիք վէ
պաղը հերետիկոսլար ինքեար խոհիւէր:

Էսկի ֆաթալիսիլէր, ինսանըն հէր տիր-
լիւ էֆալ ու ամալընը գաւսի թապիր էլլէ-

(*) Տես թիւ 143, էջ 283:

տիքերի քէօր պիտ իլահիյէթէ համլ ու իս-
նատ էտէրլէրտի, եանի հէր նէ քի վազը
օլուբսա մութլագա վազը օլաճագ իմիշ կի-
պի թէլագգը իտէրլէր վէ գաճհրէկ պէօյլէ
եազըլմը քըր, տէրլէրտի:

Կիւնիւմիւլգտէքի բօզիթիվիւթլէր տաիւի
այնի եանլըջ գանաաթա թապի տիրլէր,
չիւնքի, պուշլար տա պիգի թէչֆիգ ու
ճէգպ իտէն սէպէպլէրին գարլը զօնուլաճագ
օլան պիթ թէսիւրինէ իրատէթի ինսանիյէյի
մութլագա թապի գըլաս իտէրլէր, վէ, ին-
սանըն էֆանլ ու ամալընըն քեաֆֆէսի տէ
պուլընտըրը մուհիթին, իգլիմին, խուլգընըն
վէ պիւնեպինին թահթը թէսիւրինատէ իճրա
իտիլիւր, տէրլէր:

Բրօթէսթան վէ ժանսէնիսթլէր կիպի
պազը հերետիկոսլար տաիւի Ագամըն կիւ-
նահընտան սօնրա ինսան խայրը իչլէմէք
գապիլիյէթինի դայիպ իթմիշ տիւր վէ շէհէ-
վաթը նէֆսանիյէնին սայիգասընա մարուզ
գալմըջ աըր հօլուստա իտտաա իտէրլէր:

Պու էֆքեաըր պաթըլէյի գապուլ էյլէմէք,
խայր ու շէրրին մէվճուտիյէթինի ինքեաը
իթմէք, գանուլար մանասըզ իպարէլէր տիր,
ինսան պիթ մաքինատան ֆարզը պիր շէյ
տէյիլ տիր տէմէք գապիլիյէնտէն էրաճիֆ տիր:

Ինսանըն բուհընըն հօլմէմէլիյի:

Էվվէթ, ինսանըն բուհըն էօլէմէգ, օ հիշ
պիր վազըթ հայաթտան մահրում օլամազ:
Պուլըն պէօյլէ օլտուղընը ինքեաը իթմէք
գապիլ տէյիլ տիր, հէր շէյ պու հայիգաթը
թէեիտ ու թաստիպ իտէր:

1. Բուհըն թապիաթը,
2. Ինսանըն արզու վէ թէմայիւլաթը,
3. Ճէնապը Հագգըն քէմայաթը,
4. Ճիւմէ գալմլարըն պու հօլտաքի
գանաաթլարը,

5. Պու հագիգաթը էսասիյէնին ինքեա-
րընտան թէվէլլիւտ իտէճէք նէթայիճի մէն-
հուսէ:

1. Բուհըն թապիաթը իյթիգասընտան
տըր քի էօլմէգ օլտու, հայաթտան սուզըթ
իտիլմէսին: Զիւնքի

Պիր մէվճուտ, պօզուլամազ պիր մահի-
յէթտէ օլուպ, պաշգա հիշ պիր շէյէ ինթիյա-

ճը օլմադսըղըն եաշայըպ վէ իչլէյէճէք օլա-
պիլիւսէ, օ մէվճուտ թապէն էօլիւմսիլ պիր
մէվճուտ տէմէք տիր: Իմսի, մասամ քի
բուհ սաֆի վէ զայրը գապիլի ինզըսամ օլ-
տուղը հասէպիյլէ միւմթէնի իւլ ֆէսատ
(incorruptible) տըր: վէ սաստէ օլտուղը,
պիր ճան օլտուղը ճիհէթլէ տէ ճիւմտէն
միւսթագիլլ օլարագ եաշայըպ իչլէյէպիլիւր:
Էօյլէ իտէ բուհ, թապիաթը իյթիգասընճա
էօլիւմսիլ տիր: պիր բուհ հիշ պիր վազըթ
էօլէմէգ:

Ճանըմըղըն էօլէպիլմէսի իչու

1. Եա ծըն իչինտէ, խարապը ինթամ
իտէն պազը էսաս պուլընմալըտը:

2. Եա ծըն զայէյի մէվճուտիյէթի, ճիւ-

մէ վէրտիյի հայաթտան իպարէլթ օլմալըտը,
3. վէ եախօտ Ալլահ ծըն մահվ իթմէք
իսթէմէլիյտի: Հալպու քի պու իւշ ֆար-
պիաթըն հիշ պիրի տէ գապուլ իտիլէմէգ:
Զիւնքի:

1. Ինսանըն ճանը միւսթէնի իւլ ֆէսատ
քըր, պօզուլամազ, եանի ինսանըն ճանընտա
խարապը վէ եա էօլիւմսիլ ինթամ իտէճէք
հիշ պիր էսաս մէվճուտ տէյիլ տիր: Էօլիւմ
նէ՞ տիր: Էօլիւմ պիր մէվճուտը թէչքիլ էյ-
լիյէն ագսամըն պօզուլմաը, պիրպիրինտէն
այըլմաը տըր: Հալպու քի ճանըն հիշ պիր
գըսմը օլմադընտան, թագսիմ իտիլէմէգ
սուրէթտէ սաֆի օլտուղընտան, օ պօզու-
լամազ, ալըլմազ, էօլէմէգ:

2. Ճանըն հայաթը ճիւմին հայաթընա
մեհրաթը վի միւսթէվագըթ ճիւլ ճիւ: Իշթէ
ճիւմիմիլ էօլիւմսիլ տէն սօնրա ճանըմըղըն եա-
շայապիլմէսի պուլըն նէթիճէսի տիր: Հայ-
վանաթ պիր եալընըզ հայաթը հաստասիյէյէ
մալիք օլտուղլարընտան, պու հայաթ, ճիւմ-
սիլ իճրայի ամէլ իտէմէգ, պինաէն ալէյ
տէ հայվանըն ճիւմինին էօլմէսիլլէ, օ հա-
յաթը հաստասիյէ արթըզ սազըթ օլուր,
ճիւմի իլէ պէրապէր ծըն բուհը հաստաը-
տա մահվ օլուր կիտէր:

Փագաթ ինսանըն ճանը իչին պէօյլէ տէ-
յիլ տիր, գաթէն պուլտան ագտէմ, ինսանըն
ճանընը բուհանի օլտուղընը եանի ազայը
ճիւմանիյէնին հիշ պիրինէ միւլթամ օլմագ-

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

սրգըն, հաթթա կերէք քէնտի ամալընտա վէ կէրէքսէ էսասընտա, ծնլարտան միւս- թագիլլ օլարագ հարաքէթէ գապիլիյէթի վար օլան պիր հայաթա, հայաթը իտրաքիյէյէ մալիք օլտուղունը իսպաթ իթմիյիլ: Իշթէ պու հայաթը իտրաքիյէ ճիւմին էօլիւմիլլէ սազըթ օլտուղ վէ սազըթ օլտուղը իշին տէ պիզիմ ճանըմը թապէն էօլիւմիլլ տիր:

Քէզալիք, շայէտ ճանըմը թապէն էօլիւմիլլ օլտուղունը, շու տիւնեատա ան- ճագ պիր կէօլկէսինի կէօրտիւլիմիլլ հայա- թը սէրմէաինին, սատտէթի էպէտիյէնին վէ հադիգաթը թամմէնին մալիքիյէթի քեամի- լէինէ ծնտա հիշ արգու պուլընմամալլտը: Պու ճիւլէթի զիյրտէ տահա գիյատէ թէվլիհ իտէճէյիլ:

3. Ալլահտան մատա հիշ պիր քիմսէ ճա- նը իմհա իտէմէլ: Ալլահըն տա ինսանըն ճանըն մանլ էլլէմէք իսթէմէտիյին ազ սօն- րա թաստիգ իտէճէյիլ:

Էօլլէ իտէ ինսանըն ճանը, պիր էսէրի իմթիյալ վէ եա պիր լուիթը մախսուս նէ- թիճէսի օլարագ տէյիլ, իլլա քէնտի բու- հանի քապիաքընտա, զէվալ պուլամալ պիր հայաթ էսասընա մալիք պուլընտըղընտան նաշի էօլիւմիլլ տիր:

2. Ինսանըն արգուլարը վէ քեմայիւլարը օնըն ճանընըն հոյիւմիլլիյիլ իսպաթ ի- ճէրի:

Ֆիլհագիգա տա պիր սաասէթի քամմէ վէ պիր հայաթը հպէսիյէ մալիք օլտուղ խու- տուսընտա պիլլտէ մէվճուտ օլան թապիի վէ Քըթրի արգու, ճանըմըն էօլիւմիլլիլլիլլ- նի իսպաթ իտէր: Չիւնքի պու արգումըղլա, հայաթը հազըրէմիգտէ քեամիալ օլտուղը- զըմըղտան, էլպէթթէ պու արգումըղլա նա- յիլ օլտալիլլէճէյիմիլլ պաշգա պիր հայաթ պու- լընմալլտըր, եօգսա թապիաթըմըղլա իսպի- գի պուլընտան ճէնապր Հագգ, պիլլէ հիշ պիր վազըթ իքմալ իտիլլէմէյէճէք, գաթիէն նա- յիլ օլտալլաճաղըմըղ պիր արգու պախշ իթ- մէքէ, պիլլիլլէ էլլէնիլլ պուլուիւնաճալտը քի պուլնա իսքեան վէրիլլէմէլ: Շայէտ պիլլ- տէքի օլան պու արգուլը սատտէթ իճրա օլընմալլաճագ պիր հիսս օլմուշ օլսա, Ալ- լահ ծնը պիլլէ վէրմէլտի:

(Մապաթի վար)

ՀԱՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ. — Վատիկանի արտաքին գործոց քարտուղար Վսեմ. Մէրի տէլ Վալ- կարդինալը հեռագրով ծանոյց Մեքսիկոյի արքե- պիսկոպոսին թէ Ս. Քահանայապետը կը մաղթէ որ հարաւային Ամերիկայի պետութեանց միջնորդութեան աւաջարկութիւնը ընդունուի և Մեքսիկոյի խաղա- ղութեան և բարգաւաճման ազգու գորավիգ մ'ըլ- լայ: Ն. Վսեմ. Տէրութիւնը կը խնդրէ նոյն արքե- պիսկոպոսէն սր Ս. Հօր այս մաղթանքը հաղորդէ նախագահ գորավարին և Մեքսիկոյի ազգեցիկ անձ- նաւորութեանց:

Ս. Քահանայապետը կարդինալաթողովի սրահին մէջ ընդունեցաւ լատերանեան, վատիկանեան և լեւ- առնեան ընծայարաններու աւագիւցիւններն ու ուսա- նողները: Նորընժանեբուն յանձնարարեց բարեպաշ- տութիւն, կարգապահութիւն և ուսմունք:

ՀԱՅ-ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԿԱՐԱՆ. — Մայիս 7ին, հինգշաբթի օրը Արհ. Թէոտորովիչ, արքեպիս- կոպոս Կ. Հայոց Լէմպերկի որ մասնակցած էր Հռոմ գումարուած Ազգային Սիւնհոգոսին, և որ այս օրերս Երուսաղէմ ըրած ուխտագնացութենէն կը դառնար, և Բերա-Բալաս իշեւանած էր, իրեն ու- ղեկից վարդապետին ընկերակցութեամբ կէսօրէն յե- տոյ ժամը չորսին կաթողիկոսարան եկաւ Ամեն. Պօղոս Պետրոս ԺԳ. Թերպեան Կ. Պատրիարքին աշ- ցելութեան, և մեծ պատուով ընդունուեցաւ Արհ. Կ. Պ. Փոխանորդին և կաթողիկոսարանի պաշա- տէութեանց կողմէն, որովհետեւ Ն. Ամենապատուու- թիւնը օգափոխութեան գացած էր Քաղկեդոն Արհ. Թէոտորովի իմանալով Ն. Գերեթմանկութեան բա- ցակալութիւնը, ուղեց իսկպն աշցելի իրեն և ընկե- րակցութեամբ Գեր. Գրիգ. Յովհ. Ն. Վ. Թումայեանի անմիջապէս Քաղկեդոն գնաց, և Հոգեւոր Տէրով հեռ երկայն ու սիրալիր տեսակցութիւն մը ունեցաւ:

Յաջորդ օրը՝ ուրբաթ, Ն. Արհիպատուութիւնը պատարագեց Ս. Աստուածածին Աթոռահիստ եկե- ղեցըն մէջ և նախաճաշըրաւ կաթողիկոսարանի մէջ: Նոյն օրը Ամեն. Հոգեւոր Տէրը Քաղկեդոնէն իջած ըլլալով, աշցելութիւն տուաւ Արհ. Թէոտորո- վիին Բերա-Բալասի մէջ, ընկերակցութեամբ իր Արհ. Փոխանորդին՝ Ռոքոսեան Յովհ. Արք. Կ'ընկե- րանային նաեւ Գ. Գեր. Թէրզիպաշեան, Յ. Մ. Վ. Կէտիկեան և Ռ. Վ. Էքմէքճեան: Ետը ժամ մը տեւեց տեսակցութիւնը:

Նոյն երեկոյ՝ արեւելեան ճեպընթացով մեկնե- ցաւ պատուական հիւրը, որուն միշտեւ կայարան ողջերթի գացած էին Գ. Գեր. Թէրզիպաշեան, Յովհ. Մ. Վ. Թումայեան և Յ. Վ. Մողաբեան:

Ամեն. Հոգեւոր Տէրը մասնաւոր սենեակներ պատ- րաստել տուած էր կաթողիկոսարանի մէջ Արհ. Թէո-

տորովիչ Ար.քր. Տիեզերասիրեցու Համար. բայց որովհետեւ նա ճամբու գրայ ութ օր յապագած էր նաւեւում, աւնջդուութեան պատճառաւ, և ստիպուած էր անպատճառ մեկնելի ուրբաթ օր, ահոր Համար շնորհակալ եղաւ և ներուամն Հայցեց Ամեն. Տիրովմէն, կարի զգաճուած իրեն Հանդէպ ցոյց տրուած այսօրս սիրայի բնդուելուութեան:

* Մայիս 10ին Ջմառ փանքին մէջ, Հոռոմէն հաս-
 տատուած նոր կոնսնագրին համեմատ տեղի ունե-
 ցաւ Միարանուծեան ընտրական ժողովին անդա-
 նին նիստը, նախագահութեամբ Կ. Պատր. Ներկայա-
 ցուցիչ Արժ. Ռեոստրինս Արք. Մայրեղեանի, և մեծա-
 ւոր ընտրուեցաւ Գեորգի Գրիգոր վ. Վայնաշարեան:
 Նոյն օրն իսկ Արժ. Մայրեղեան Արք. այս ընտրու-
 թիւնը հեռագրով ծանօյց Ալիւն. Հոգեւոր Տիրոջ, որ
 անմիջապէս հեռագրով հաստատեց նոյն ընտրութիւ-
 լը և հաջորդեց իր շնորհատրուծիւնն ու օրհնու-
 թիւնը:

Գեր. Վալնաչարեան Գր. Վ., շնիկ Եւգոկիացի
 և շուրջ 48 տարեկան ծանօթ է իր քաղցրաբարոյ ու
 խոհեմ ընթացքով. սրբազան գիտութեանց և քանի
 մը լեզուներու ալ հմուտ է: Շատ տեղեր պաշտօնա-
 վարած ու միշտ սիրուած է: Հեռակաւոր Զմմառ-
 ան սիրելի Միաբանութիւնը կը շնորհակալորդէ այս
 յաջող քնտրութեան համար, որ առաջինն ըլլալով նոր
 կանոնադրի հաստատութենէն ի վեր, գարապլուս պի-
 տի կազմէ Միաբանութեան անդամներէն մէջ:
 Նշեալէ մեր անդամին խիղակցութիւնները կը մա-
 տալանէնք նորնորտ արժանաւոր ընդհ. Մեծ աւորին
 Միառ. Զմմառու:

Նորին Գերերջ. Տէրութիւնը որ այնքան աշխատեցաւ այս Միաբանութեան բարօրութեան համար, յիշարէ և յարժանի ուրախ և գոհ է այս յաջող վախճանէն որով Տէրը պատկեց իր հայրական հոգածութեան բերով

Պատգ աղբիւրէ լսեցաւ թէ՛ յերջերս՝
Պղտէն Ս. Քահանայապետին գացած է Պոզոս Մոմ-
նեան ստորագրել թիւում նստակ մը որուն մէջ ան-
պատշաճ բացատրութիւններով կը խօսուի Աւենա-
պատելի Թէրզեանի կ. Պատրիարքին դէմ:

Մեծաշուք Պողոս էֆ. Մոմճեան որ Կ. Պոլսոյ
Հայ Կաթողիկէ Հասարակութեան ամենէն ծանօթ
ղեմեաբէն է, կը յայտարարէ թէ ինք բնաւ աղպիսի
անանկ կը չէ գրած ևս Էֆեօսեան կը բողոքէ իր ա-
նունը մեղադրին զեմ:

Պօղոս էֆ. Սոսեան Ա. Քահանայապետին
ուղղեց յառուկ գրութիւն մը որուն մէջ բողոքելով
գործուած ստոր կեղծարարութեան դէմ, կը յայտնէ
իր որդական խորին յարգանքն ու հպատակութիւնը
առ Բերաբային Կոնստնտնուպոլսի, միան-
գամայն կը յայտարարէ թէ ինքք իբր ճշմարիտ կա-
թոլիկի, բնաւ չէ թերցած չարարտ ու պատշաճ
մեծարանքի ու հաղանդութեան մէջ Դառ Ա.

Մենք ու Գրեգորը, Հոգեւոր Տէր, Պօղոս Պ. ԺԳ. Թերզեան, Է. Պատրիարք Տանն Կիլիկիայ, զոր աշխպէս կը ծանչնուող ու ծանչնալ կը հրամայէ Ս. Բահայանայպետը, միակ և անդիմադրելի Դատաւոր Ս. Եկեղեցւոր

Պ. Էֆ. Մոմճեան այս առթիւ խնդրած է իր և իր ընտանեաց զրայ՝ Նորին Սրբութեան Օրհնութիւնը:

✱ Մարտ 6ին, Զորեքշարթի օրը, Անարատ
Յղութեան Հայ-Կաթողիկէ Բերց Մայր Վանքի
մատարան մէջ, հանգուցեալ Ազարեան Լիւսիս տիկ-
նի՞ջ հոգւոյն համար պատարագ մատուց Գերլ. Յովհ.
Ս. Վ. Թուսայեանն Յետոյ տեղի ունեցաւ հաքե-
նայեալեան պաշտօնն։ Ներկայ էին Մայր Տան և Ս.
Բնին օրրանոցին բոլոր Բոլորեք և Սանահնեբերք։

ԻԶՄԻԱԾՆԱԿԱՆ ՀԱՅՏԵՐ. — Հայ Էջմ. Երեսփոխան Ժառ Սոյապապետան Ազատամարտի մէջ Տ. Զաւէն պատրիարքին դէմ նախատաղից և վարկարեկեղբաց նամակ մը հրատարակեց: Պատրիարքը իր արժանապատուութիւնը պաշտպանելու համար մատուարդ քրով զիմեց ազգ. ժողովին և պահանջեց որ ազգին պետք անարգող երեւոյթիւններն դէմ հարկ եղած տնօրէնութիւնը ձեռք առնուի: Ժողովը առանց որոշում մը տալու զրկեց նոյն գիրը նախաձեռնութեան զիւտնին ի նտիտքնութիւն: Ժողովին այս ընթացքին վրայ պատրիարքը անկարելի նկատելով շարունակել իր պաշտօնը յայտնեց թէ պիտի հրաժարի:

Ազգի, Ժողովին Աստենապետ Գարբիէլ Էջ. Նորա-
տունկեան, Քաղաք. Ժողովին Աստենապետ Տոքթ.
Դաւիթեան Էջ. և վարչական ժողովականք և ուրիշ
բազմաթիւ անձեր պատրիարքին գիմկով խնդրած
են որ հրաժարականի խնդիրը մինչեւ Ազգ. Ժողովին
առաջիկայի նիստը յետանձերէ, վասն զի անպատճառ
զոհողութեմ պիտի տրուի իրեն, և միանգամայն յայ-
տարարած են որ իր բողոքագրին նախաքննութեան
դիմելիչն ո՛չ թէ իր գիտողութեան օրինաւորութիւնը
քննութեան ենթարկելու համար էր, այլ որդեկու
համար թէ Ազգ. Ժողովը ի՛նչ տեսակ կարգադրու-
թիւն կրնայ ընել ն. Ամենապատուութեան գոհա-
ցում տալու համար:

Տէր Զաւէն Պատրիարք տաժաւնաւ յետաձգեց
իր հրաժարականը և պիտի շարունակէ գործերը վա-
րելէ յինչեւ որ Ազգ. Ժողովը կարգադրութիւն չը
րնէ:

✱ Սիւնէն Պապոյ հոյ թերթի երուն կը հաղորդեն
թէ Նիկիիէյ կաթողիկոսը իր քարտուղար Գիւստ վար-
դապետին եպիսկոպոսական ձեռնադրութիւն տալուն
առթիւ եկեղեցւոյ մէջ ցոյցեր եղած են, պատարա-
ղը և արարողութիւնը խափանուած է, ոստիկանու-
թիւնը միջամտած, և հետեւեալ օրը հաղիւս ոտտի-
կանական Տակոչութեան կարելի եղած է ձեռնադ-
րութիւնը կատարել:

Ներուսաղէսի Ս. Յակոբ վանքին մէջ շատ տեղերն ի վեր շարունակուող զեղծուածներուն վերջ մը տալու համար Պոլսոյ Ազգ. Ժողովը նախկին Պատրիարք Որմանեանէ և Կիւրեղեան էֆէ բաղկացած պատուիրակութիւն մը զրկեց Ներուսաղէսի Պատուիրակութիւնը յանուն ազգին պիտի տիրանայ վանքին պիտի լուծէ հոն ինքնակոչ կերպով կազմուած մարմինները, պիտի ստանայ բոլոր հաշիւները, պիտի ցուցակագրէ գոյքերն ու ստացուածքները, պիտի պատժէ ըմբոստներն ու զեղծարարները, և նոր կեանք ու կանոն հաստատելէ և Ազգ. Ժողովին քուէարկած կանոնադրին դործադրութիւնը ապահովելէ յետոյ պիտի ձեռնարկէ պատրիարքական ընտրութեան նախապատրաստական աշխատութեանց:

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ.— Անցեալները Բաղէշի մէջ ապստամբական ու յետադիմական շարժումին առթիւ հոն կազմուած պատերազմական Ատեանը մանրազնին կերպով և արդարութեամբ կատարուած քննութիւններով մահուան պատապարտեց հետեւեալ տասներեկ ոճրագործները՝ իբրեւ գէպքին ամենէն ազգեցիկ ու գործօն սարքողները.

1. Ապտալի ձէլալէտտին օղլու Ալի
2. Բաքուսանլը Շէհապէտտին
3. Եղբայրը Մէհմէտ Շիրին
4. Հէքինլի Պայապիտ օղլու Ֆըզհա Խալիլ
5. Գարգալը Ապտիւսափաթ օղլու Մօլլա Մուհիտտին
6. Քէօրճանլը Մօլլա ձինտի
7. ձանկէօրօղլու Մէհիտ
8. Խօթուրը Ապտուլլահ օղլու Խուրշիտ
9. Նախորդ վեհապետին հրացանակիրներէն Հուսիսի Հասան օղլու Ալի
10. Հիւսէյին օղլու Հաճի Պապիլ
11. Խուրանլը Մուսա օղլու Հաճի ձէրաթ

12. Սիւլէյման, Շասախ գիւղախումբին Լաշկան գիւղէն:

13. Ֆըզհ Սէլիմ, նոյն գիւղախումբին Եագօ գիւղէն:

14. Հաճի Մէրկան, Մեմէ գիւղախումբին Հօման գիւղէն:

— Կայս. Իրատէ մը վաւերացուցած բլլալով պատերազմական Ատեանին վճիւրը, վերագրեալ անձերը կախաղան հանուեցան Բաղէշի մէջ. 76 հոգի, որոնց գէպքին մասնակցութիւնը չէ հաստատուած յարօժակուեցան: Միւս բանտարկեալներուն մասին քննութիւններն առաջ կը տարուին: Այս տեղեկութիւնները կը հաղորդէ Բաղէշի կուսակալը:

— Սալիմ ու քէմալ պէյերն Էօրէլիս օղանաւով Մայիս 10ին առաւ Գահրէ ժամանեցին և ժողովրդեան կողմէ խանդավառութեամբ ընդունուեցան:

— Էրթողլուլ զբօսանաւով, ներքին գործոց նախարար Թալէաթ պէյ, պատերազմական նախորդ նախարար Իզզէտ փաշա, գնդ. Շիւքրի պէյ, ներքին գործոց նախարարութեան մասնաւոր գիւմաշին առաւ Հասան Ֆէհմի պէյ ու տեղակալ Ալի պէյ, Մայիս 9ին Լիվաթիա գաղին, Սուլթանին անուանով ողջունեցին Ջարը Լիվաթիա ժամանելուն առթիւ:

— Թանին կ'ըսէ Թէ Թալէաթ պէյի օտմ, պատուիրակութեան գլուխը գտնուիլը բաւական է ցոյց տալու ուղեւորութեան քաղաքական հանգամանքը: Նշանաւոր հանգրուան մը պիտի ըլլայ այն երկու երկրներուն դիւանագիտական յարաբերութեանց զարգացումին համար:

Մայիս 8ին սոսկալի երկրաշարժ մը տեղի ունեցաւ Սիկիլիոյ մէջ. 200 մարդու չափ մեռած է. 300ի չափ ալ վերաւոր: Շատ գիւղեր կործանած են:

Ալպանիայ և Եպիրոսի գործերը յուսալից դիտակ մը մէջ կը գտնուին այժմ:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ն

Դէպքեր եւ սկզբունքներ	305
Պիւր օսնէ էվլաս	307
Նամակ առ Աղեփանդր Կաթողիկոս	309
Ջուղա քաղաքին վրայ ճեղկութիւն	311
Խմաստութեան սկզբանց վրայ բարոյական եւ պատմական խորհրդածութիւններ	312
Եօթնեակ Գրիսոնէի	313
Սամսունէն	314
Այլեւայլ	316
Գաթոյիք Մէգնէպի էսասլարը	316
Տեղեկագրական	318

ԱՐՏՕՆԱՏԵՐ

ՅՈՎԼ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ



ՏՆՕՐԷՆ-ԽՄԱՒԱԳՐԱՊԵՏ

ԳԵՈՐԳ Ծ. Վ. ԹԵՐԶԻՊԱՆԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ. — Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20. — մէկ թիւ՝ 1 դհկ. — Արսասահ-
ման տար. ֆր. 10. վեցամս 5. — Վճարմունք կանխիկ են:

ՀԱՍՏԷ. — Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրաւ փողոց 5, Կ.
Պոլիս:

GATOGHIGUÉ, ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ. — 1. — Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2. — Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու է
յօդուած: 3. — Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4. — Ձեռագիրները ետ չեն դարձուիր: Յօդուածներու 5. —
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6. — Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7. — Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակագրոյժ ի միասին զրկել:

Տարր. Սկզբունք Բրիտ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:
Տէր. Կոմիտաս Բահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստմանալ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար կը տպուին ամեն տե-
սակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, բարդեր, բարդ-ատրէսներ,
մահազգներ, եւն. եւն.: Գիները անմրցելի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
շակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս զօհ պիտի
նշան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 150.000.000 de couronnes

Réserves: 49.000.000

SIÈGE CENTRAL:

VIENNE 1. Schottenring

SUCCURSALES:

EN AUTRICHE-HONGRIE: Agram, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Drohobycz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegersdorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Pölten, Stanislau, Turnopol, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwettau.

EN TURQUIE:

Constantinople et Smyrne.

SUCCURSALE DE CONSTANTINOPLE

Siège: Galata, Place du Pont de Karakeuy

Agences: à Stamboul, Péra et Scutari.

Le Wiener Bank-Verein fait toutes opérations de Banque et notamment:

Avances en Compte-Courant contre dépôt des titres, effets de commerce ou marchandises;

Escompte d'effets de commerce;

Achat et vente de change sur l'Etranger;

Emission de lettres de crédit et ouverture d'accréditifs simples et documentaires;

Palements télégraphiques en Turquie et à l'Etranger;

Encaissement d'effets, de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages;

Exécution d'ordres de Bourse sur place et à l'Etranger;

Ouverture de Comptes-Chèques et de comptes-dépôts à intérêt;

Garde de titres, marchandises etc.

Achat et vente de monnaies diverses, matières précieuses, monnaies d'ornements;

Caisse d'Epargne à 3. $\frac{1}{2}$ % d'intérêt.

Location de coffre-fort (à Galata et à Stamboul).

UN BUREAU DE VOYAGE (Représentant des Chemins de fer de l'Etat Autrichien) est attaché à l'Agence de Péra et délivre des billets pour tout l'Univers. Les voyageurs y trouveront toutes facilités possibles et tous renseignements désirés.